

Հայ գիտնականը կարող է լուծել ցանկացած բարդ խնդիր



Գիտության պետական կոմիտեն նախանշում է անելիքները

Գիտությունը Հայաստանում այն եզակի ոլորտներից է, որի բյուջեն աճում է պետական բյուջեի աճին զուգընթաց. այսինքն, ոլորտը պաշտպանված է օրենքով՝ հաշվի առնելով այն կարևոր նշանակությունը, որ ունի գիտությունը պետության զարգացման համար: 2016թ. ՀՀ պետական բյուջեից գիտության ոլորտի ֆինանսավորումը կազմել է 14,2 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2017թ. համար սահմանվել է աճ՝ 0,8 տոկոսի չափով: Այս մասին երեկ կայացած ասուլիսում տեղեկացրեց ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«2017թ. համար ունենք ոչ զգալի, սակայն աճ: Հայաստանյան գիտության համար խիստ կարևոր էր մեր երկրի մասնակցությունը Եվրամիության գիտական հետազոտությունների և տեխնոլոգիաների զարգացման 8—րդ շրջանակային ծրագրին՝ «Հորիզոն—2020»-ին, որը յոթամյա գիտական ծրագիր է՝ ուղղված եվրոպական հետազոտական տարածությունում գիտության զարգացմանը: Պետական բյուջեից հատկացվող գումարների զգալի մասը տրամադրվելու է «Հորիզոն—2020»-ի ասոցացման վարձավճարների համար: Հույս ունենք, որ այն գումարները, որոնք տրվում են Եվրամիությանը, որպես ասոցացման անդամ, դրանց զգալի մասը հետ է վերադառնալու և միգուցե կրկնապատիկ չափով: Ի վերջո, «Հորիզոն—2020»-ը ԵՄ խոշորագույն շրջանակային ծրագիրն է, որի բյուջեն կազմում է 80 մլրդ եվրո, և որը հնարավորություն կտա հայաստանյան գիտնականներին մասնակից դառնալու միջազգային խոշոր գիտական հետազոտություններին», -ասաց Ս. Հարությունյանը:

Գիտության պետական կոմիտեի նախագահը նկատեց, որ վերջին ժամանակները ոլորտի նկատմամբ հասարակական ընկալումը դրական ազդակներ է հաղորդում՝ խոսելով հասարակություն—գիտություն կապի վերստեղծման մասին: Դրական ազդեցություն են թողել անցկացվող մրցույթները, միջազգային լայն համագործակցությունը. «Սակայն կարծում եմ, որ դա բավարար չէ, որպեսզի հասարակությունը գիտությունն ընկալի այնպես, ինչպես պետք է: Ամեն դեպքում, ժամանակ և աշխատանք է պահանջվում, որպեսզի հասարակություն—գիտություն կապը դառնա ավելի շոշափելի»:

Ներկայումս, ըստ Ս. Հարությունյանի, Հայաստանում գիտության ոլորտում կա 6 հազար 700 աշխատող, նրանցից 1200—1300—ը ստանում են միջինը 200 հազար դրամից մինչև 450 հազար ՀՀ դրամ աշխատավարձ. «Գիտության դոկտորն այսօր ստանում է միջինը մոտ 130 հազար դրամ աշխատավարձ, իսկ գիտությունների թեկնածուն՝ 105—110 հազար դրամ: Մենք հասել ենք նրան, որ ակտիվ գիտնականը տարբերվում է և կարողանում է բազմաթիվ ծրագրերից գումար ստանալ. դա վերաբերում է թե բազային, թե տեղական և թե միջազգային ծրագրերին: Հայաստանը ներկայումս միջազգային ռեյտինգ ունեցող 400 գիտնական ունի, իսկ դա շատ լուրջ թիվ է մեզ նման փոքր երկրի համար»:

Գիտության պետական կոմիտեի նախագահը վստահեցրեց՝ հայ գիտնականը կարող է լուծել

ցանկացած բարդ խնդիր, մասնավորապես՝ ռազմարդյունաբերության ոլորտում, եթե լինեն ուղղորդված պատվերներ: Ներկայումս ոլորտում ֆինանսավորվող ծրագրերը վերաբերում են և զինվորների կենցաղային պայմանների բարելավմանը, և ինժեներատեխնիկական, ռազմատեխնիկական բազմաթիվ խնդիրների լուծմանը. նախորդ տարվա ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 42 նման ծրագիր է ֆինանսավորվել. «Այս ուղղությամբ նոր կառավարությունը՝ ի դեմս վարչապետ Կարեն Կարապետյանի, բավականին վճռական է տրամադրված: Հույս ունեմ, որ առաջիկայում մեր մշակումների մի մասը, որոնք այսօր ուղղակի պահեստավորված են, հետագայում կունենան լուրջ կիրառություններ: Հայաստանի Հանրապետության գիտական ներուժն ի զորու է լուծել շատ բարդ խնդիրներ՝ ինչպես պաշտպանական, այնպես էլ տնտեսական հարցերի հետ կապված»:

Արման ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ինովացիոն կամ գիտական մենեջմենթի պակաս Հայաստանում. բացը նոր կառավարությունը կլրացնի

Հայ գիտնականները կարող են փնտրեսության մեջ կիրառվող արդյունք ստեղծել՝ այսօր «Ռադիոլուրի» հետ զրույցում վստահեցրել է կրթության ու գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն ու մատնանշել «Հայ կենսաարտադրական տեխնոլոգիա գիտական միավորում» կենտրոնի կողմից իրականացվող կենսաբանական պարարտանյութերի արտադրությունը: Կենտրոնի առաջատար գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու Գայանե Ավետիսովան «Ռադիոլուրի» հետ զրույցում նշել է, որ այս տարվանից գյուղացիներին տրամադրվող պարարտանյութերին զուգահեռ նաև տեղականն է առաջարկվելու: Տնտեսագետ Արմ Մարգարյանի հետ էլ փորձել ենք հասկանալ, որքանով են արդյունավետ գիտության ոլորտին տրվող գումարները ծախսվում:

Ամեն տարի գիտության պետական կոմիտեին պետական բյուջեի սուղ միջոցներից տրամադրվում է տասը մլրդ դրամից ավելի գումար: Այսօր գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանից փորձեցինք պարզել՝ որքանով են ֆինանսավորվող ծրագրերը կիրառվում տնտեսության մեջ:

Վստահեցրեց՝ ներդրվում են, ավելին, նշեց, որ պատվերի դեպքում կարող են ավելին անել: «Տնտեսությունից է կախված արդյունքը», - կարծիք հայտնեց զրուցակիցս, «եթե տնտեսությունը ուժեղ լիներ, արդյունքներն ավելին կլինեին»:

Ռազմական արդյունաբերություն- գիտություն կապը առավել ամուր հիմքերի վրա դրվեց վերջին շրջանում:

Սամվել Հարությունյանի տեղեկացմամբ, 2016-ին ՊՆ-ից 42 ծրագիր են ֆինանսավորել, դրանք լուրջ ազդեցություն կունենան բանակի վրա: Գիտպետկոմի նախագահը սակայն փակագծերը չի բացում: Տնտեսության մեջ կիրառվող ծրագրերից Հարությունյանն այդուհանդերձ մատնանշեց.

«Հայ կենսաարտադրական տեխնոլոգիա գիտական միավորում կենտրոնի կողմից իրականացվող կենսաբանական պարարտանյութերի արտադրությունը»:

Շուրջ յոթ տարի հայ գիտնականները աշխատել են ու արդեն 2009թ սկսել կենսաբանական պարարտանյութի արտադրությունը: Կենտրոնի առաջատար գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու Գայանե Ավետիսովան «Ռադիոլուրի» հետ զրույցում նշեց, որ տեղական արտադրության պարարտանյութը մինչև 60 տոկոս բերքատվություն և 20 տոկոս հողերի բերրիություն է ապահովում:

«Ռադիոլուր»-ի զրուցակցիս խոսքով, առայժմ կարող են ամսական մոտ 40 տոննա արտադրել, 2500 դրամ արժեք ունեցող հեղուկ այս պարարտանյութը հիմնականում անհատ ֆերմերներն են ձեռք բերում, երբեմն՝ մասնավոր կառույցները՝ Արմավիրի ու Գեղարքունիքի մարզերից: Այն կարելի է գնել հենց կենտրոնից:

Հայ գիտնականներն իրենց առաջարկը նաև վարչապետին են ներկայացրել, այս տարվանից սելիտրային զուգահեռ գյուղացիներին նաև տեղական այս պարարտանյութն է տրամադրվելու, - ասաց:

Գիտնականները սակայն հանրապետության ողջ պահանջարկը չեն կարող բավարարել՝ ֆինանսներ չկան:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան Ատոմ Մարգարյանը «Ռադիոլուրի» հետ զրույցում ընդգծում է՝ գիտությանը տրամադրվող գումարի մեծ մասն ուղղվում է հիմնարար գիտության ֆինանսավորմանը: Կիրառական գիտությանը հասնում է ֆինանսավորման ավելի փոքր մասը: Այդուհանդերձ՝ նշում է, որ մոտ երեք տարի է, ինչ կենսաբանության, քիմիայի, գյուղատնտեսության ոլորտներում ֆինանսավորվում են մի քանի ծրագրեր: Ատոմ Մարգարյանը հույս ունի որ դրանք կոնկրետ արտադրանքի ելք կունենան:

Ստացված արդյունքը իրական արտադրություն դառնալու, աշխատատեղ ու եկամուտ ստեղծելու համար համապատասխան քաղաքականություն պետք է իրականացվի՝ ինովացիոն քաղաքականություն:

«Ինովացիոն կամ գիտական մենեջմենթ» . սա է պակասում Հայաստանին,- համոզված է Ատոմ Մարգարյանը: Զարգացած համալսարանական համակարգերում ու ընդհանրապես զարգացած երկրներում շատ հարգված կրթական ծրագրեր են, Հայաստանում գիտական մտքի առևտրայնացման մշակույթ ցավոք չկա:

Ատոմ Մարգարյանը կարծում է, որ այս բացը նոր կառավարության գործունեության հիմնական վեկտորներից մեկը պետք է լինի: Միաժամանակ նկատում է՝ աշխարհում գիտական ոլորտի ֆինանսավորման 60 տոկոսից ավելին խոշոր ընկերություններն են իրականացնում, Հայաստանում՝ 80 և ավելի տոկոսը պետբյուջեն է ֆինանսավորում:

«Կառավարությունը կարող է բիզնեսի առջև նոր տեխնոլոգիաների ներդրման անուղղակի պահանջարկ ներկայացնել՝ պարզապես փակելով մենաշնորհային որոշակի դիրքի օգտագործման ու ընդհանրապես այլ ոչ մրցակցային ճանապարհներով գերշահույթի ստացման հնարավորությունը: Այս դեպքում ընկերությունը հաստատ ինովացիայի ու գիտական պրոդուկտ ստեղծելու մասին կմտածի, լաբորատորիաներ կստեղծի, կամրապնդի իր երկարաժամկետ ներկայությունը շուկայում», - եզրափակում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան Ատոմ Մարգարյանը:

Ի դեպ, Կարեն Կարապետյանի կառավարության հիմնադրույթներից մեկն էլ գիտության ֆինանսավորման ծավալների հիմնական մասի ուղղորդում դեպի կիրառական և փորձակոնստրուկտորական ծրագրերի կիրառումն է՝ սակայն 2018 թվականից սկսած:

Հայ գիտնականները կարող են լուծել պաշտպանական բարդ խնդիրներ

Երևան: Մեդիամաքս: Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը 2016թ.-ը գիտության համար բովանդակային իմաստով ծանր և պատասխանատու տարի է որակել:

Այսօր լրագրողների հետ հանդիպմանը, ամփոփելով անցած տարվա աշխատանքները, Սամվել Հարությունյանն ասել է, որ պետական բյուջեից գիտության ոլորտի ֆինանսավորման ծավալը կազմել է 14,2 մլրդ. դրամ, որից 12,6 մլրդ դրամը՝ բազային ֆինանսավորման, շուրջ 1,4 մլրդ. դրամը թեմատիկ ծրագրերի վրա է ծախսվել: Նրա խոսքով կարևոր տեղ է հատկացված պետական նպատակային ծրագրերին (հիմնականում տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող), որոնց ուղղվել է 1,8 մլրդ դրամ:

Սամվել Հարությունյանը նկատել է, որ գիտությունն այն եզակի ոլորտն է, որի ֆինանսավորումը պետական բյուջեի ավելացմանը զուգահեռ պարտադիր աճում է (այս տարի աճը կազմել է 0,8%):

«Հայտարարվել և կազմակերպվել են ներպետական 5 և միջազգային 6 մրցույթ, որոնց արդյունքում գիտնականները կստանան հավելավճարներ: Մեր որդեգրած քաղաքականության համաձայն՝ առաջիկա տարիներին աշխատելու ենք ավելացնել գումարները կիրառական արդյունքների ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների համար: Մեզ հաջողվել է ֆինանսավորել 4 ծրագիր, որոնք առաջիկա 2 տարիներին պաշտպանական խնդիրների լուծմանն ուղղված հատուկ գիտահետազոտական աշխատանքներ կիրականացնեն», - ասել է նա:

Գիտություն և պաշտպանական խնդիրներ

Սամվել Հարությունյանն ասել է, որ պաշտպանական ոլորտում ֆինանսավորվող ծրագրերը միտված են ինչպես զինվորների կենցաղային պայմանների բարելավմանը, այնպես էլ ինժեներատեխնիկական, ռազմատեխնիկական խնդիրների լուծմանը:

«Հայ գիտնականն այս ոլորտում կարող է լուծել ցանկացած խնդիր, եթե լինեն ճիշտ ուղղորդված պատվերներ: Դա բազմիցս ապացուցվել է և արդեն ունենք բավական լուրջ հաջողություններ», - ասել է նա:

Գիտություն և տնտեսություն

Գիտությունը և տնտեսությունը, ինչպես նկատել է կոմիտեի նախագահը, իրար դեմ հանդիման շարժվող հասկացություններ են. համապատասխան պատվերի դեպքում կլինեն համապատասխան լուծումներ:

«Մենք ունենք բազմաթիվ ծրագրեր, որոնք ենթակա են առևտրայնացման: Պետությունը պետք է ունենա համապատասխան պատվերներ: Նոր կառավարությունը, ի դեմս նոր վարչապետի, վճռական է տրամադրված այս ուղղությամբ: Հույս ունեմ, որ առաջիկայում մեր մշակումների մի մասը, որ այսօր ուղղակի պահեստավորված են, հետագայում կունենան լուրջ կիրառություններ: Այնպես, որ ՀՀ գիտական ներուժն ի զորու է լուծել բազմաթիվ խնդիրներ, ցավոք, պետպատվեր հստակ չի ձևակերպվում», - ասել է նա:

Սամվել Հարությունյանը կարևորել է Ռուսաստանի հետ արված՝ փոքր ու միջին բիզնեսի գիտական ծրագրերի աջակցության մրցույթը: Նա նշել է, որ այս ծրագրերը հետագայում անմիջապես ներդրվելու են տնտեսության մեջ: Ծրագրի ավարտն ամփոփվում է նոր ձեռնարկությունների ստեղծմամբ:

Գիտություն և կիրառություն

Սամվել Հարությունյանի դիտարկմամբ՝ նոր Կառավարության ծրագրով, 2017թ.-ին գիտության ոլորտում իրականացվելիք մի քանի կարևոր կետեր կան, որոնք վերաբերում են կիրառական արդյունքների ուղղությամբ իրականացվող ուսումնասիրությունների ավելի ինտենսիվացմանը:

«Մեր բյուջեի զգալի մասը հիմնարար ուսումնասիրությունների վրա է ծախսվում: Առանց հիմնարար գիտության կիրառական լուրջ արդյունքներ ակնկալել հնարավոր չէ: Ապագայում կիրառական գիտության մասնաբաժինը կուժեղացնենք՝ չմոռանալով հիմնարարը: Կիրառական բլոկը պետք է գումար աշխատի և ֆինանսավորի հիմնարարին, ինչպես ընդունված է զարգացած երկրներում», - ասել է նա:

Գիտություն և հասարակություն

Հայաստանում մոտ 400 ակտիվ աշխատող գիտնական կա, որոնք միջազգային բարձր վարկանիշ ունեն: Գիտության ոլորտի 6700 կադրերից մոտ 4500-ն են գիտաշխատող:

Գիտնականի աշխատանքը, Սամվել Հարությունյանի կարծիքով, վերջին տարիներին հասարակության կողմից ավելի լավ է ընկալվում.

«Մրցույթներն ահագին աշխուժացրել են մեր հասարակության այն մասին, որը հետաքրքրված է գիտությամբ: Միջազգային համագործակցությունը նույնպես բավական լավ ազդեցություն է թողել: Բայց ես կարծում եմ, որ այսքանը բավարար չէ, որ հասարակությունը գիտությունն ընկալի այնպիսին, ինչպիսին պետք է, որ ընկալի: Ժամանակ և աշխատանք է պահանջվում, որպեսզի հասարակություն-գիտություն մերձեցումը դառնա ավելի շոշափելի»:

Գիտական և ինովացիոն ծրագրերի իրականացման արդյունքում Հայաստանում և Ռուսաստանում կստեղծվեն համատեղ ձեռնարկություններ

Փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորմած 6 գիտական ծրագրարի ավարտից հետո Հայաստանում և Ռուսաստանում նախատեսվում է համատեղ ձեռնարկությունների ստեղծում: Այս մասին հունվարի 17-ին կայացած մամուլի ասուլիսում հայտարարել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, ամփոփելով 2016 թվականի գործունեության արդյունքները:

2016 թվականի հունիսի 16-ին Մոսկվայում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել գիտատեխնիկական ոլորտի փոքր ձեռնարկությունների աջակցության հիմնադրամի հետ: Համաձայնագրի նպատակը փոքր և միջին նորարարական ձեռնարկությունների և հետազոտական ինստիտուտների զարգացումն է միջազգային համագործակցության և տեխնիկական / ակադեմիական անձնակազմի և հետազոտողների երկկողմ փոխանակման ծրագրերի շրջանակներում:

2016 թվականին Հայաստանում առաջին անգամ տեղի ունեցավ ռուսական կողմի հետ համատեղ մրցույթ ՓՄՁ ոլորտի աջակցության գիտական և ինովացիոն ծրագրերի միջև: Հաստատված 22 հայտերի առկայությամբ որոշում է ընդունվել 6 ծրագրերի ֆինանսավորման մասին: «Առաջին անգամ մենք ֆինանսավորում ենք փորձա-կոնստրուկտորական աշխատանքները, որոնք հետագայում անմիջականորեն կներդրվեն Հայաստանի և Ռուսաստանի տնտեսություններում: Այսպիսով, ծրագիրը կավարտվի երկու երկրներում համատեղ ձեռնարկությունների ստեղծումով», - նշել է Հարությունյանը: Հայկական կողմի ներդրումները, նշել է նա, բավականին համեստ են: Միևնույն ժամանակ, ռուսական կողմը նույնպես ցանկություն է հայտնել ծրագրի ավարտից հետո գտնել ներդրողների:

Ինչպես պարզաբանել է Հարությունյանը, ֆինանսավորված ծրագրերից մեկը վերաբերվում է պարարտանյութերի արտադրության ստեղծմանը ոչսպիտակուցային ամինաթթուների հիմքի վրա: Ծրագիրը ներկայացվել է ՀՀ վարչապետին, ով խոստացել է, որ ծրագրի արդյունքները լայն կիրառություն կունենան գյուղատնտեսությունում:

Մյուս ծրագրը վերաբերվում է միջուկային էներգետիկայի ոլորտին, մասնավորապես, ԱԷԿ-ի համար ջերմային սենսորների ստեղծմանը: Ծրագրի հեղինակներն են Հայաստանի և Ռուսաստանի հայտնի դեմքեր: «Կարծում եմ, որ ծրագիրն ունի մեծ ապագա», - հայտարարել է Հորությունյանը:

Կան ծրագրեր նաև միկրոկենսաբանության, բժշկության, ֆիզիկայի, արագացուցիչների արդիականացման ոլորտներում:

Նշենք, որ համաձայնագրի շրջանակներում համագործակցության հիմնական ուղղություններն են՝ էներգետիկա, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, կենսատեխնոլոգիա և բժշկություն, տիեզերական և միջուկային հետազոտություններ, տեխնիկա և տեխնոլոգիաներ, նյութաբանություն: Համաձայնագրով նախատեսվում է համատեղ գիտական մրցույթների իրականացում, համատեղ ծրագրերի մշակում և իրականացում «Հորիզոն 2020» ծրագրի շրջանակներում, համագործակցության ցանցի ամրապնդում փոքր և միջին ձեռնարկությունների և գիտահետազոտական ինստիտուտների միջև:

Գիտության պետական կոմիտեն պաշտպանությանն ուղղված 42 ծրագիր է ֆինանսավորել

Հայաստանի Հանրապետության գիտական պոտենցիալն ի զորու է լուծել շատ բարդ խնդիրներ ինչպես պաշտպանական, այնպես էլ տնտեսական հարցերի հետ կապված: «Արմենպրես»-ի հաղորդմամբ, այս մասին կոմիտեի 2016 թվականի գործունեությանը նվիրված մամուլի ասուլիսում ասաց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Նա նշեց, որ տնտեսությունն ուղղակի պետք է համապատասխան պատվերներ ունենա: «Այս ուղղությամբ նոր կառավարությունը՝ ի դեմս վարչապետի, բավականին վճռական է տրամադրված, և հույս ունեմ, որ առաջիկայում մեր մշակումների մի մասը, որոնք այսօր ուղղակի պահեստավորված վիճակում են, հետագայում կունենան լուրջ կիրառություններ», - ասաց նա: Անդրադառնալով ռազմարդյունաբերության ոլորտում ֆինանսավորվող ծրագրերին՝ Հարությունյանը նշեց, որ դրանք հիմնականում միտված են զինվորների կենցաղային պայմանների բարելավմանը, և ինժեներատեխնիկական, ռազմատեխնիկական բազմաթիվ խնդիրների լուծմանը: «Հայ գիտնականը կարող է լուծել ցանկացած բարդ խնդիր, եթե ուղղված պատվերներ լինեն. դա բազմիցս ապացուցվել է», - ասաց Հարությունյանը: 2016 թվականին պետական բյուջեից գիտության ոլորտին ֆինանսավորման ծավալը կազմել է 14.2 միլիարդ դրամ:

Գիտության պետական կոմիտեի ֆինանսավորումը կավելանա 0.8 տոկոսով

ՀՀ կրթության և գիտության պետական կոմիտեի ֆինանսավորումը 2017 թվականին կավելանա 0,8 տոկոսով: «Արմենպրես»-ի հաղորդմամբ, լրագրողների հետ հանդիպմանը կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը նշեց, որ այդ գումարը հիմնականում կուղղվի «Հորիզոն 2020»-ի ասոցացման վարձավճարները մուծելու համար: «Գիտությունն այն եզակի ոլորտներից է մեր երկրում, որի բյուջեն օրենքով պաշտպանված է, այսինքն՝ պետբյուջեի աճին զուգընթաց աճում է նաև գիտության ոլորտի բյուջեն», - ասաց նա՝ հույս հայտնելով, որ այն գումարների մեծ մասը, որոնք տրվում են ԵՄ-ին որպես ասոցացման անդամ, հետ կվերադառնան կամ կրկնապատկվեն: 2016 թվականին պետական բյուջեից գիտության ոլորտին ֆինանսավորման ծավալը կազմել է 14.2 միլիարդ դրամ:

Հայ գիտնականների կողմից նոր պարարտանյութի ստեղծման ծրագիրը պատրաստ է կիրարկման

Այսօր ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը լրագրողներին ներկայացրեց 2016-ին կոմիտեի գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: Ըստ նրա՝ տարին ծանրաբեռնված է եղել, անցկացվել են տասնյակ մրցույթներ, միջազգային գիտաժողովներ: Բեղուն է եղել տարին միջազգային համագործակցության շրջանակներում. անցյալ տարի ստորագրվել է «Հորիզոն-2020» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիրը:

«Դա շատ կարևոր էր մեզ համար, քանի որ մենք, փաստորեն, գիտության ոլորտում Եվրոպայի հետ ասոցացված երկիր ենք համարվում և կարող ենք եվրոպական ծրագրերին լիարժեք մասնակցել», - ասաց Սամվել Հարությունյանը՝ հավելելով, որ դեռ ծրագիր չունեն, բայց հույս ունի, որ առաջիկայում լավ ծրագրեր կլինեն:

Նա հայտնեց նաև, որ միջազգային համագործակցության ոլորտում ստորագրվել է «Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիա ստեղծելու մասին» մտադրությունների հուշագիր: Հուշագրեր ու համաձայնագրեր են ստորագրվել նաև ՀՀ ԿԳ նախարարության և Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության միջև, ՀՀ ԿԳՆ և Գիտության, տեխնիկայի ոլորտում ՓՄՁ զարգացման աջակցման հիմնադրամի միջև:

Միջազգային նշանակության միջոցառումներ են իրականացվել՝ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի օրերը Հայաստանում, Արևելյան գործընկերության գիտության նախարարների ոչ պաշտոնական երկխոսությունը, Հայաստանի ինովացիոն զարգացման զեկույցի եզրակացությունների վերաբերյալ գիտաժողովը:

Սամվել Հարությունյանի խոսքով՝ հատկացված բյուջեի զգալի մասը ծախսվում է հիմնարար գիտություններին վերաբերող հետազոտությունների վրա, ինչն էլ ապահովում է հաջողություններ կիրառական ոլորտի զարգացման համար: Կիրառական ոլորտն էլ, իր հերթին, պետք է գումար աշխատի և ուղղի հիմնարար գիտությունների զարգացմանը:

Հարցին, թե ո՞ր ծրագրերն է համարում հաջողված, որո՞նք կարող են կիրառվել տնտեսության մեջ, Սամվել Հարությունյանը պատասխանեց, որ կարող է առանձնացնել այն ծրագիրը, որը միտված էր ՓՄՁ զարգացմանը, այն Ռուսաստանում հայտնի է որպես Բորտնիկի ֆոնդ: Անցյալ տարի գիտության պետական կոմիտեն Բորտնիկի հետ ստորագրել է համաձայնագիր, ֆինանսավորվել են 6 ծրագրեր: Ծրագրի արդյունքը նոր ձեռնարկությունների ստեղծումն է կա՛մ Ռուսաստանում, կա՛մ Հայաստանում:

Ըստ նրա՝ Հայաստանը գումարներ է շահել նաև «Հորիզոն 2020»-ից՝ մոտ 3 միլիոն եվրոյի չափով: Հաջողված ծրագրերից Հարությունյանը մատնանշեց մոլեկուլյար դեղաբանության ոլորտին, լազերային ոլորտին ու գյուղատնտեսությանը վերաբերող ծրագրերը: Մասնավորապես՝ գյուղատնտեսության մեջ հաջողված է ոչ սպիտակուցային ամինաթթուների հիման վրա պարարտանյութերի ստեղծման ծրագիրը, որն այսօր պատրաստ է կիրառման: «Վարչապետի հետ հանդիպման ժամանակ ներկայացվել է այդ ծրագիրը: Նա խոստացել է ապահովել դրա կիրառությունը գյուղատնտեսության ոլորտում», - ասաց Սամվել Հարությունյանը:

Ըստ նրա՝ ֆինանսավորվել է մեկ ֆիլմի նկարահանում: Այն համշենահայության մասին է: Հեղինակը պետհամալսարանի աշխատակցուհի է: Ֆիլմը Կանադայում մրցանակ է ստացել: